

ԾՐԱԳՐԵՐ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ

ՓԻՋՏԻԿՈՒՄ — ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՓԱԿՈՒԼՏԵՏԻ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1937

29 JAN 2018

ՀԽՍՀ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 37

Հ Ե Ռ Ա Կ Ա Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

№ 37

51071

Ծ Ր Ա Գ Ր Ե Ր

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ

ՖԻԶԻԿԱ — ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՓԱԿՈՒՆԵՏԻ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1937

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ՌԱՏԻՍՏՎԱԾ ԼՈՒՍՈՂՎՈՄ ԸՆԿ. Ա. Ս
ԲՈՒԲՆՈՎԻ ԿՈՂՄԻՑ 1935 թվի ՈԳՈՍՏՈՍԻՆ:

Ծրագիրը խմբագրել են՝

Պրոֆ. Ն. Ֆ. ԶԵՏՎԵՐՈՒԽԻՆ (տարրական մաթեմատիկա, վերլուծական յերկրաչափություն, մաթեմատիկական անալիզ, բարձրագույն հանրահաշիվ, գծագրություն գծագրական յերկրաչափության հետ, հաշվումների տեսությունը և պրակտիկումը, հավանականություն տեսություն, տեսական մեքանիկ, աստղաբաշխություն, մաթեմատիկայի մեթոդիկա):

Պրոֆ. Ա. Ն. ԶԻՆԻՐՄԱՆ (եքսպերիմենտալ ֆիզիկա, տեսական ֆիզիկա, տեսական մեքանիկ, էլեկտրոն-և ռադիո տեխնիկա, աստղաբաշխություն գեոֆիզիկայի հետ, ֆիզիկայի մեթոդիկա):



11-2800391

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ Ա. ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԸՆԹԱՅԻՐ

I ՀԱՆՐԱՀԱՇԻՎ

1. Հավասարություն և առաջին աստիճանի հավասարումների սխեմներ: 2-րդ և 3-րդ կարգի դիտերմինանտներ: Համասեռ հավասարումներ:

2. Թվաբանական անհավասարումներ: Թեորեմներ բացարձակ մեծությունների մասին: Նույնական և պայմանական անհավասարություններ:

3. Կոմպլեքս թվեր: Յերկանդամ և յեռանդամ հավասարումներ:

4. Աստիճանի գաղափարի ընդհանրացումը: Աստիճանի և լոգարիթմի ընդհանուր հատկությունները: Լոգարիթմների տարբեր սխեմները: Ցուցչային և լոգարիթմական ֆունկցիաների զրաֆիկը:

5. Միացությունների տեսությունը հավանականության տեսության տարրերի հետ: Նյութոնի յերկանդամը:

II ՅԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ

6. Ուղիղներ և հարթություններ տարածության մեջ:

7. Յեռանիստ և բազմանիստ անկյուններ: Կանոնավոր բազմանիստեր:

8. Բազմանիստերի և կլոր մարմինների հատկությունները: Դրանց հարթ հատումները:

9. Մարմինների հավասարությունը և նմանությունը:

III ՅԵՌԱՆԿՅՈՒՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ

10. Ցանկացած անկյան յեռանկյունաչափական ֆունկցիաները: Յեռանկյունաչափական ֆունկցիաների զրաֆիկները:

11. Հակադարձ յեռանկյունաչափական ֆունկցիաներ և դրանց զրաֆիկները:

12. Յեռանկյունաչափական հավասարումներ:
13 Յեռանկյունաչափության կիրառությունները յերկրաչափության մեջ:

IV ՀԱՇՎՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԱՐՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14. Հաշվեքանուէն:
15. Սխալների հաշվումը:
Դիտողութիւն—14 և 15 կետերի համապատասխան բովանդակությունը տես «հաշվելու տեսություն ու պրակտիկում» ծրագրում:

Բ. ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՑՔ

I ԿԱՌՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

1. Յերկրաչափական տեղերի մեթոդ:
Կետի աստիճանը շրջանագծի նկատմամբ. ռադիկալ առանցք և ռադիկալ կենտրոն: Շրջանագծերի փնջեր և կապեր:
2. Յերկրաչափական ձևափոխությունների մեթոդ (համաչափություն, պտտում և տեղափոխություն): Նմանություն: Ինվերսիա:
3. Հանրահաշվական մեթոդ:

II ՏԵՍԱԿԱՆ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

4. Բնական թվերի նկատմամբ գործողությունների որոնքները (ապացույցները լրիվ ինդուկցիայի մեթոդով): Բացասական թվեր և զերո: Թվերի բազմությունը, վորպես ողակ (КОЛЬЦО):
5. Պարզ թվեր: Երատոսֆենի մադը: Պարզ թվերի շարքի անվերջությունը: Բաժանելիության տեսությունը: Եվկլիդի ալգորիթմը: Առաջին աստիճանի բաղադրում. առաջին աստիճանի անորոշ հավասարումներ:
6. Ֆերմայի փոքր թեորեմը: Ոչլերի թեորեմը: Գաուսի թվային ֆունկցիաները և մի քանի ուրիշները (տված թվի բաժանարարների քանակը, զրանց գումարը, արտադրյալը): Բաժանելիության հատկանիշները:
7. Կոտորակը վորպես ամբողջ թվերի զույգ: Գործողու-

թյուններ կոտորակների նկատմամբ: Կոտորակային թվերի բազմությունը վորպես մարմին:

8. Իդուացիոնալ թվերի Դեդեկինդյան տեսությունը: Արժատ հանելու և լոգարիթմելու գործողությունները իրական թվերի տիրույթում: Գաղափար հանրահաշվական և տրանսցենդենտ թվերի մասին: (Տրանսցենդենտ թվերի գոյության Կանտորյան ապացույցը): Իդուացիոնալ թվերի մոտավորացումը ռացիոնալ թվերին:

Պարբերական և վոչ պարբերական կոտորակներ: Անընդհատ կոտորակներ. զրանց կիրառություններն առաջին աստիճանի անորոշ հավասարումները լուծելիս:

III ՆՈՒՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ ՏԱՐՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՀԱՇՎԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

9. Հանրահաշվական արտահայտությունների նույնական ձևափոխությունների հիմնավորումը:

10. Հավասարումների և հավասարումների սխեմի համարժեքություն տեսությունը:

IV ՅԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՆԱԼԻԶ

11. Ուսումնը յերկարությունների, մակերեսների և ծավալների չափումների մասին:

12. Կավալերիի սկզբունքը (պտտությունը, քննադատությունը, ժամանակակից հիմնավորումը, մեթոդիկան): Կիրառությունները յերկրաչափության և ստատիկայի մեջ (ստատիկ մոմենտներ, ծանրության կենտրոններ):

13. Սիմպսոնի բանաձևը մակերեսների, ծավալների, ստատիկ մոմենտների հաշվելու կապակցությամբ:

14. Հասկացություն կոր մակերեկվոր ժակերեսի մասին:

Շվարցի գլանը:

V ՅԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՆՐԱՀԱՇՎ

15. Հավասարումներ (գլխավորապես 3-րդ աստիճանի), վորոնք լուծվում են քառակուսի արմատներով:

16. Կարկինի և քանոնի ոգնությամբ լուծվող և չլուծվող կառուցման խնդիրները (խորանարդի կրկնապատկումը, անկյան 3 հավասար մասերի բաժանելը, կանոնավոր բազմանկյուններ):

VI ՅԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

17. Զուգահեռության քննադատապատմական ուսումնաքնները՝ եվկլիդեսի — մինչ Լոբաչևսկին:

18. Յերկրաչափության հիմունքների հարցի ժամանակակից վիճակը: Աքսիոմատիկա: Մեկնաբանումը (Պուանկարե, Կեյլ-կլայնի):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Вебер—Вельштейн,— Энциклопедия элементарной математики, т. I и II.
2. Клейн,— Вопросы элементарной математики с высшей точки зрения.
3. Энриковес,— Вопросы элементарной геометрии.
4. Адлер,— Теория геометрических построений.
5. Фербер,— Арифметика.
6. Бонола,— Неевклидова геометрия.
7. Балдус,— Неевклидова геометрия.
8. Каган,— Очерк геометрической системы Лобачевского.
9. Успенский,— Введение в Неевклидову геометрию Лобачевского — Больяи.
10. Гильберт,— Основания геометрии.
11. Васильев,— Введение в анализ.
12. Александров,— Геометрические задачи на построение.

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

Ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետում տարրական մաթեմատիկայի դասընթացի բովանդակությունը բնորոշ և նրանով, վոր այդ ֆակուլտետում տարրական մաթեմատիկան ուսումնասիրվում է միայն վորպես մաթեմատիկական դիսցիպլինա, վորի վրա վորոշ չափով հենվելու յեն մաթեմատիկայի այլ ճյուղեր, այլ նաև վորպես դիսցիպլինա, վորն իրենից ներկայացնում է միջնակարգ գաղափարներում ավանդվող առարկա:

Տարրական մաթեմատիկայի դասընթացը ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետում բաղկացած է տարրական մաթեմատիկայի ընդհանուր դասըն-

թացից, վորը կարգացվելու յեն 1, 2 սեմեստրներում և տարրական մաթեմատիկայի հատուկ դասընթացից, վոր կարգացվելու յեն 5, 6, 7, և 8 սեմեստրներում:

Տարրական մաթեմատիկայի ընդհանուր դասընթացի նպատակն է՝ միջնակարգ գաղափարներում ձևաբերած գիտելիքները լրացնել, կարգավորել (схе-матизировать), գիտականորեն հիմնավորել և առաջնա մեկտեղ ստեղծել ամուր հիմք տեսական գաղափարների տիրապետման և բարձրագույն մաթեմատիկայի ու ֆիզիկայի գործնական ուսակութունների բնական անցման համար:

Տարրական մաթեմատիկայի հատուկ դասընթացն ունի հետևյալ բովանդակությունները՝

1) 5-րդ սեմեստրում ուսումնասիրվում է կառուցման խնդիրների տեսական և գործնական մեթոդները, 2) 6-րդ սեմեստրի կուրսը նվիրած է տեսական թվաբանությանը թվերի տեսության տարրերի հետ և տարրական հանրահալի տեսության յերկու հիմնական հարցերին (նույնություններ և հավասարումներ), 3) 7-րդ և 8-րդ սեմեստրներում կարգացվում է յերեք գլուխ՝ (յերկրաչափություն և անալիզ, յերկրաչափություն և հանրահալի և յերկրաչափության հիմքերը), վորոնք նվիրած են տարրական մաթեմատիկայի մի շարք հարցերին, բարձրագույն մաթեմատիկայի տեսակետից լուսաբանվելու:

Տարրական մաթեմատիկայի հատուկ դասընթացը պետք է ուսանողներին մեջ բարձրացնի տարրական մաթեմատիկայի գիտելիքները վորոշ բարձրության և ապագա տարրական մաթեմատիկայի դասադասվին հաղորդի այս գիտելիքներին ժամանակակից գիտական հիմունքները: Ինչ վերաբերվում է գրականությանը, ապա համապատասխան գասադիրք չկա, այդ պատճառով տրվում է այն գրքերի ցանկը, վորոնք կարող են ծառայել առարկայի ուսումնասիրման համար:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՅԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ

I ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՅԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ՎՐԱ

1. Ուղանկյուն ղեկարդյան կոորդինատներ:

Հիմնական խնդիրներ. յերկու կետերի հեռավորությունը, հատվածի բաժանումը տված հարաբերությամբ, յեռանկյան մակերեսը: Կոորդինատների ձևափոխումը (այլակերպումը):

2. Յերկու անհայտով հավասարումների յերկրաչափական նշանակությունը: Գծերը, վորպես յերկրաչափական տեղ, դրա հավասարումները ղեկարդյան կոորդինատներով (որինակներ):

Կորերի պարամետրական հավասարումները (որինակներ՝ շրջանագիծ, էլիպս, քիկլոյդ): Բևեռային կոորդինատներ (որինակներ՝ շրջանագիծ, ուղիղ, սպիրալ):

3. Ուղիղը և իր հավասարումները (անկյունային գործակիցով, հատվածներով, նորմալ ձևով): Ուղիղի ընդհանուր հավասարումը: Մեկ և յերկու կետով անցնող ուղիղների հավասարումը: Ուղիղների փնջերը: Ուղիղների զուգահեռություն և ուղղահայացություն պայմանները: Յերկու ուղիղներով կազմված անկյունը:

4. Յերկրորդ կարգի կորերի պարզագույն հավասարումները: Շրջան: Ելիպս: Հիպերբոլ: Պարաբոլ: (Կենտրոն: Տրամագծեր: Առանցքներ: Ֆոկուսներ և դիրեկտրիսաներ: Եքսցենտրիսիտետ: Շոշափողներ և նորմալներ): Հիպերբոլի հավասարումն ասիմպտոտների նկատմամբ: Յերկրորդ կարգի կորերի բովեռային հավասարումները:

5. Հասկացություն շեղանկյան կոորդինատների մասին: Դեկարդյան կոորդինատների ընդհանուր ձևափոխությունները: Յերկրորդ կարգի կորերի ընդհանուր հավասարումների հետադոտումը: Յերկրորդ կարգի կորերը, վորպես կոնական հատույթներ:

II ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՅԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. Ուղանկյուն ղեկարդյան կոորդինատները տարածության մեջ: Անկյունների ուղղություններն առանցքների հետ և ուղ-

ղորդ կոորդինատներ: Յերկու ուղիղներով կազմված անկյունը: Հիմնական խնդիրներ. յերկու կետերի մեջ ընկած հեռավորությունը, հատվածի բաժանումը տված հարաբերությամբ: Ուղանկյան կոորդինատների ձևափոխումը տարածության մեջ:

2. Հարթության հավասարումը (հատվածներով և նորմալ ձևով): Հարթության ընդհանուր հավասարումը: Յերկու հատույթյամբ կազմված անկյունը: Հարթությունների զուգահեռություն և ուղղահայացություն պայմանները: Հարթությունների փնջը: Ուղիղ: Մեկ կամ յերկու տված կետերով անցնող ուղիղի հավասարումը: յերկու ուղիղների, հարթության և ուղիղի փոխ զասավորությունը: Զուգահեռության և ուղղահայացության պայմանները:

3. Գլանային մակերևույթների հավասարումները: Գնդային մակերևույթը և իր հավասարումը:

4. Զ-րդ կարգի մակերևույթների պարզագույն հավասարումները: Պատման էլիպսոիդի, պարաբոլոիդի և հիպերբոլոիդի հավասարումների արտածումը: Զ-րդ կարգի մակերևույթների հետադոտումը հատումների ոգնությամբ: Զ-րդ կարգի ուղագիծ ծնիչավոր մակերևույթների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Комарницкий,—Основания аналитической геометрии.
2. Привалов,— Курс аналитич. геометрии, изд. 1934 г.
3. Брадис,— Аналитическая геометрия, 1934 г.
4. Цубербиллер,— Сборник задач и упражнений по аналитической геометрии.

ԲՍՑԱՏՐԱԳԻՐ

Դասընթացի առաջին մասում շարադրվում և կոորդինատական մեթոդի ընդհանուր տեղեկությունները և լուծվում հիմնական խնդիրները: Յերկրորդ կարգի կորերը դեռ ուսումնասիրվում են կանոնական ձևով, ապա՝ ընդհանուր:

Վերլուծական յերկրաչափության հիմնական գաղափարները պետք և յուրացվի առաջին մասի ուսումնասիրության ժամանակ: Դասընթացի Զ-րդ մասը դիտվում է, վորպես այդ գաղափարների տարածումը յեռաչափ տարածության մեջ: Այդ պատճառով վերլուծական յերկրաչափության Զ-րդ մասին (տարածության մեջ) հասկացված և ավելի քիչ ժամեր և դասախոսության ժամերն ավելացված են ի հաշիվ վարժությունների:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶ

ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՖՈՒՆԿՑԻՍՅԻ ՄԱՍԻՆ.— Հաստատուն և փոփոխական մեծություններ: Փունկցիոնալ կապակցություն, ֆունկցիաների արտահայտման յեղանակները: Փունկցիայի վորոշման տիրույթը:

ՍԱՀՄԱՆՆԵՐ: Հասկացություն սահմանի մասին: Անվերջ փոքր և անվերջ մեծ մեծություններ, գործողություններ, զրանց վերաբերյալ: Սահմանների վերաբերյալ հիմնական թեորեմներ: Անվերջ փոքր անկյան սինուսի և իր աղելի հարաբերություն սահմանը: Նեպերի թիվը: Անվերջ փոքրերի կարգերը: Անվերջ փոքրերի հանրահաշիվը:

ԱՇԱՆՅՅԱԼՆԵՐ ՅԵՎ ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼՆԵՐ: Ածանցյալի սահմանումը և յերկրաչափական իմաստը: Փունկցիաների դիֆերենցիալը և նրա յերկրաչափական իմաստը: Դիֆերենցյալը վորպես ածի գլխավոր մաս: Բարձր կարգի դիֆերենցյալներ: Բարդ ֆունկցիաների (ֆունկցիայի ֆունկցիա) դիֆերենցիալի ինվարյանտությունը: Անբացահայտ ֆունկցիաների առաջին և բարձր կարգի ածանցյալները, հակադարձ ֆունկցիաներ և պարամետրական ձևով տված ֆունկցիաներ: Հասկացություն մասնակի ածանցյալների մասին:

ԵՔՍՏՐԵՄՈՒՄՆԵՐ.— Փունկցիաների ածման և նվազման յերկրաչափական և անալիտիկ հատկանիշները: Եքստրեմումի կետերը: Մաքսիմումի և մինիմումի անհրաժեշտ և բավարար պայմանները:

ՅՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Հարթ կորի շոշափողը և նորմալը: Կորի գոգավորությունը: Կորի գոգավորության յերկրաչափական և անալիտիկ հատկանիշները: Շրջման կետեր: զրանց հետադոտումը: Փունկցիաների զրաֆիկները կառուցումն առաջին և յերկրորդ ածանցյալների ոգնությունը:

ՎԵՐՋԱՎՈՐ ԱՃՈՒՄՆԵՐԻ ԹԵՈՐԵՄՆԵՐ.— Ռոլլի թեորեմը: Լագրանժի և Կոշիի բանաձևերը: Լոպիտալի կանոնը: Հարթ կորերի ասիմպտոտներ:

ԱՆՈՐՈՇ ԻՆՏԵԳՐԱԼ: Նախնական ֆունկցիաներ: Ինտեգրում: Ինտեգրման կամավոր հաստատուններ: Անորոշ ինտեգրալի հիմնական հատկությունները: Մասերով և տեղադրումներով ինտեգրումներ: Ռացիոնալ ֆունկցիաների ինտեգրումը:

Իռռացիոնալ ֆունկցիաների ինտեգրումը: Ընդ ինտեգրալ արահայտությունների ռացիոնալացումը:

ՎՈՐՈՇՅԱԼ ԻՆՏԵԳՐԱԼ.— Ինտեգրալային գումար: Վորոշյալ ինտեգրալը, վորպես ինտեգրալային գումարի սահման: Վորոշյալ ինտեգրալի հիմնական թեորեմները: Լայբնից—Նյուտոնի բանաձևը: Փունկցիայի միջին արժեքը: Միջին արժեքի թեորեմը: Փոփոխականի փոխարինումն ինտեգրալի նշանի տակ: Պարզագոյն անիսկական ինտեգրալներ:

ՎՈՐՈՇՅԱԼ ԻՆՏԵԳՐԱԼԻ ՅՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Կորագիծ սեղանի և կորագիծ սեկտորի մակերեսը: Աղելի յերկարությունը: Պտտման մարմինների ծավալը և մակերևույթը: Վորոշյալ ինտեգրալի մեքանիկական կիրառությունները (ստատիկ մոմենտ, իներցիայի մոմենտ, ծանրություն կենտրոն):

ՇՍՏ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՖՈՒՆԿՑԻՍՅՈՒՆՆԵՐ: Փունկցիայի վորոշման տիրույթը: Յերկու փոփոխականի ֆունկցիայի յերկրաչափական մեկնաբանումը: Մասնակի և լրիվ ածումներ: Փունկցիայի անընդհատությունը:

ՄԱՍՆԱԿԻ ԱՇԱՆՅՅԱԼՆԵՐ ՅԵՎ ԼՐԻՎ ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ.— Յերկու փոփոխականի մասնակի ածանցյալները և զրանց յերկրաչափական մեկնաբանումը: Փունկցիայի լրիվ դիֆերենցիալը: Բարդ ֆունկցիաների դիֆերենցումը: Բարդ ֆունկցիայի լրիվ դիֆերենցիալի ինվարյանտությունը: Բարձր կարգի մասնակի ածանցյալներ: Դիֆերենցման արդյունքի անկախություն պայմանն իր կարգից: Անբացահայտ ֆունկցիաների դիֆերենցումը: Եքստրեմումի անհրաժեշտ պայմանները: Հարաբերական եքստրեմում:

ԲԱԶՄԱՊԱՏԻԿ ԻՆՏԵԳՐԱԼՆԵՐ: Ինտեգրումն յերկչափ տիրույթով: Ինտեգրալի հաշվումը հաջորդաբար ինտեգրումով: Մարմնի ծավալը և մակերևույթի մակերեսը: Ինտեգրումն յեռաչափ տիրույթով: Յեռապատիկ ինտեգրում: Մակերևույթների և մարմինների ծանրության կենտրոնի կոորդինատների և իներցիայի մոմենտի հաշվումը:

ԹԵՅԼՈՐԻ ԲԱՆԱԶԵՎԸ: Թեյլորի բանաձևն ամբողջ բաղմանդամի համար: Թեյլորի բանաձևը կամավոր ֆունկցիայի հա-

մար: Թեյլորի Բանաձևի մնացորդային անդամը: Ֆունկցիաները բազմանդամին մոտավորացնելու խնդիրը:

Թեյլորի բանաձևը յերկու փոփոխականի ֆունկցիայի համար: ՇԱՐՔԵՐ.—Հասկացություն շարքի մասին: Շարքի անդամների գումարը: Դրական անդամներով շարքեր: Զուգամիտման հայտանշեր (հիմնված համեմատման վրա): Դալամբերի և Կոշիի հայտանշերը: Կոշի—Մակլորենի հայտանշը: Նշանափոփոխ շարքեր: Լայբնիցի հայտանշը: Բացարձակ գուգամիտում: Հանրահաշվական հիմնական գործողությունները շարքերի նկատմամբ: Փոփոխական անդամներով շարքեր: Աստիճանային շարքի գուգամիտման շառավիղը:

Աստիճանային շարքերի ինտեգրումը և դիֆերենցումը:

Թեյլորի շարքը: Ելեմենտար ֆունկցիաների, Թեյլորի շարքի վերածումը: Շարքերի կիրառությունը լոգարիթմական և յեռանկյունահասկական մեծությունների աղյուսակներ կազմելիս:

Հասկացություն Ֆուրբյի շարքի մասին: Ֆուրբյի շարքի գործակիցների վորոշումն Ոյլերի յեղանակով:

ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ՅԵՐԿՐԱՅԱՓՈԻԹՅՈՒՆ: Սկալար և վեկտորական մեծություններ: Վեկտորների գումարումը և հանումը: Վեկտորի բազմապատկումը սկալար թվով: Սկալար արտադրյալ: Վեկտորական արտադրյալ: Փոփոխական վեկտորներ: Վեկտորի դիֆերենցումն ըստ սկալար արգումենտի: Վեկտոր-ֆունկցիայի վերածումը Թեյլորի շարքի: Հարթ կորերի կորություն շառավիղը և կորություն կենտրոն: Եվոլյուտ, եվոլվենտ և դրանց հատկությունները: Տարածական կորերի արժան յեղանակները: Միակ շոշափող վեկտոր: Շոշափող ուղղի, համան հարթություն, գլխավոր նորմալի և բինորմալի վեկտորական և կորոդինատական ձևով հավասարումները: Կորություն և վորոշում: Ֆրենեյի բանաձևերը: Մակերևույթի շոշափող հարթությունը և նորմալը վեկտորական և կորոդինատական ձևով: Դժային ելեմենտի քանակություն: Մակերևույթի կորությունը և կորություն գլխավոր շառավիղները:

ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ: Հասկացություն դիֆերենցիալ հավասարումների մասին: Մասնավոր և ընդհանուր լուծումներ: Առաջին կարգի դիֆերենցիալ հավասարման յերկրա-

չափական մեկնաբանումը և դրա լուծելը: Փոփոխականների անջատումը: Համասեռ հավասարումներ: Դժային հավասարումներ: Լրիվ դիֆերենցիալով հավասարումներ: Ինտեգրող բազմապատկիչ: Կիրառությունները յերկրաչափություն և ընական դիտելիքների մեջ: Արգումենտի կամ ֆունկցիայի նկատմամբ լուծվող դիֆերենցիալ հավասարումներ: Հազրանժի և Կլերոյի հավասարումները: Յեղական լուծումներ: Կորերի ընտանիքի պարուրիչներ: Դիսկրիմինանտային կոր: Յեղական կետեր: Յեղական լուծումների ստացումը ընդհանուր ինտեգրելալից և դիֆերենցիալ հավասարումից: Բարձր կարգի դիֆերենցիալ հավասարումներ: Զորգ կարգի դիֆերենցիալ հավասարումներ, վորոնք չեն պարունակում արգումենտը կամ ֆունկցիան, կամ առաջին ածանցիալը: Հաստատուն գործակիցներով գժային հավասարումներ: Քարակտերիստիկ հավասարումը: Մասնավոր և ընդհանուր լուծումների ստացումը: Հաստատուն գործակիցներով անհամասեռ գժային հավասարումների ընդհանուր ինտեգրալը: Անորոշ գործակիցների յեղանակը: Զոնժվող շարժումներ:

ԱՆՎԵՐՋ ՓՈՔՐԵՐԻ ԱՆԱԼԻԶԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ.—Վերջավոր և անվերջ բազմություններ: Իռացիոնալ թվի վորոշումը և իրական թվերի բազմությունը (Դեդեկինդի աեսությունը): Բազմությունների հգորությունը: Հաշվելի և անհաշվելի բազմություններ: Ռացիոնալ թվերի բազմությունը: Կոնտինուում: Բազմությունների ստորին և վերին կողարները: Սահմանային կետեր: Բուլցման—Վայերշտրասի թեորեմը: Հաջորդականությունների սահմանը: Սահմանի գոյություն Կոշիի հատկանիշը: Ֆունկցիայի գաղափարի ընդարձակումը: Ֆունկցիայի սահմանը և անընդհատությունը կետում: Հավասարաչափ անընդհատություն: Անընդհատությունների վերաբերյալ հիմնական թեորեմներ: Տարրական ֆունկցիաների անընդհատությունը (աստիճանային ֆունկցիայի և արժատի, ցուցային և լոգարիթմական ֆունկցիաների, յեռանկյունահասկական ֆունկցիաների): Ողվող ֆունկցիաներ և իրենց առաջացման յեղանակները (սահմանի անցումը և անբացահայտ տրված):

ԱՆՎԵՐՋ ՓՈՔՐԵՐԻ ԱՆԱԼԻԶԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ—(չառունակությունը): Ֆունկցիայի դիֆերենցիությունը: Ածանցյալ

թիվ: Մի քանի փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ թյունը: Ռիմանի իմաստով ֆունկցիաների ինտեգրելիությունը: Դարբի վերին և ստորին գումարները: Ինտեգրելիության անհրաժեշտ և բավարար պայմանները: Անընդհատ ֆունկցիաների նախնական ֆունկցիայի գոյությունը: Անխակական ինտեգրալների սահմանումը: Ինտեգրալի դիֆերենցումը և ինտեգրումն ըստ պարամետրի: Պուասոնի ինտեգրալը: Շարքերով տված ֆունկցիաներ: Վայերշտրասի հատկանիշը: Անընդհատ անդամներով հավասարաչափ շարքի գումարի անընդհատությունը: շարքերի դիֆերենցումը և ինտեգրումը:

ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ.— Հավասարումներով տված ֆունկցիաներ: Անբացահայտ ֆունկցիայի գոյությունը թեորեմը: Դիֆերենցիալ հավասարումներով փորձվող ֆունկցիաներ: Գոյությունը թեորեմը: Հասկացություն դիֆերենցիալ հավասարման մոտավոր ինտեգրման մասին: Լուծման կախումը նախնական պայմաններից: Հաստատուն և փոփոխական գործակիցներով գծային դիֆերենցիալ հավասարումներ: Ֆունկցիաների գծային անկախությունը: Վրոնսկու դետերմինանտը: Ֆունկցիաներով սխտեմը: Դիֆերենցիալ հավասարման ընդհանուր լուծման ստացում ֆունկցիաներով սխտեմի ոգնությունը: Կամավոր հաստատունների վարիացումը (փոփոխումը): Լրիվ դիֆերենցիալով դիֆերենցիալ հավասարումներ: Գծային դիֆերենցիալ ձևը և այն պայմանները, յերբ դա լրիվ դիֆերենցիալ է: Հասկացություն կորագիծ ինտեգրալի մասին: Կորագիծ ինտեգրումը, փորպես դիֆերենցիան հակառակ գործողությունը:

ԱՆԱԼԻՏԻԿ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: Կոմպլեքս թվի մոդուլի և արգումենտի հատկությունները: Կոմպլեքս թվերի հաջորդականությունից սահմանը: Անվերջ հեռու կետ: Կոմպլեքս փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցումը: Անալիտիկ ֆունկցիաներ: Վորոշման տիրույթը: Հասկացություն կոնֆորմ արտապատկերման մասին: Գծային ֆունկցիա և իր հատկությունները: Աստիճանային ֆունկցիա և արժատ: Կոմպլեքս անդամներով շարքեր: Աստիճանային շարքեր: աստիճանային շարքերի իրական տիրույթի համար ապացուցած հատկությունների տարածումը կոմպլեքս տիրույթում: Աստիճանա-

յին շարքերով փորձված տրանսցենդենտ ֆունկցիաներ: Յուլի-չային ֆունկցիա և լոգարիթմ: Յեռանկյունաչափական ֆունկցիաները կոմպլեքս արգումենտով: Յեռանկյունաչափական և աստիճանային ֆունկցիաների մեջ յեղած կապը: Կորագիծ ինտեգրալները կոմպլեքս տիրույթում: Կոշիի ինտեգրալը:

Անալիտիկ ֆունկցիայի վերածումը Թեյլորի շարքի: Լիու-վիլի թեորեմը ռացիոնալ կոտորակները պարզագույն կոտորակների վերածելու մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) Առաջին մասով (I և II կուրս):

Հիմնական.

1. Жегалкин и Слудская,—Введение в анализ и дифференциальное и интегральное исчисление, т. I, II и III.

2. Дубнов,—Задачник по дифференциальному исчислению.

3. Жегалкин,—Задачник по интегральному исчислению.

Լրացուցիչ.

1. Гренвиль и Лузин,—дифференциальное и интегральное исчисление, т. I, II

2. Смирнов,—Курс высшей математики, т. I и II

3. Милинский,—Дифференциальная геометрия.

բ) Յերկրորդ մասով (III և IV կուրս):

Հիմնական.

1. Курант,—Дифференциальное и интегральное исчисление т. I и II

2. Валле—Пуссен,—Курс анализа бесконечно-малых, т. I и II

Լրացուցիչ:

1. Смирнов,—Курс высшей математики, т. I и II

2. Курса,—Курс математического анализа т. I и II

3. Привалов,—Теория функций комплексного переменного.

4. Александров и Колмогоров, — Введение в теорию функций действительного переменного.
5. Дедекин, — Непрерывность и иррациональные числа.
6. Борель, — Основные вопросы алгебры и анализа.

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

Մաթեմատիկական անալիզի դասընթացը բաղկացած է յերկու տարբեր նշանակություն ունեցող մասերից: Առաջին մասը պարունակում է մաթեմատիկոսների համար համահավասար անհրաժեշտ նյութ, և կարգացվում է առաջին չորս սեմեստրներում, 2-րդ մասը հատկապես նշանակված է մաթեմատիկոսների համար և կարգացվում է վերջին չորս սեմեստրներում:

Դասընթացի առաջին մասը նվիրված է մաթեմատիկական անալիզի կլասիկ հարցերին և նպատակն է սովորողին տանել այդ դիսցիպլինայի հիմնական հասկացությունների, դադարաբանների և մեթոդների ըմբռնմանը և հաղորդի նրանց տեսական ու գործնական գիտելիքների այն ծավալը, լոբնք անհրաժեշտ են այդ դադարաբանների լրիվ տիրապետմանը և անվերջ փոքրերի մեթոդը բնագիտության և հատկապես մեքանիկայի ու ֆիզիկայի ասպարիզում գիտակցորեն կիրառելու համար:

Դասընթացի յերկրորդ մասի նպատակն է մաթեմատիկական անալիզի հիմնական հարցերի այժմյան գիտական ըմբռնման ուսումնասիրումը:

Յերրորդ կուրսում անցվող գլուխները նվիրված են այն հասկացություններին և դադարաբանների ելույթյան և տեսական հիմնավորման պարզաբանմանը, լոբոնց վրա ներկայումս կառուցվում է մաթեմատիկական և մասնավորապես՝ անալիզը, վերը և յուրաքանչյուր մաթեմատիկայի դասառու պարտավոր է լրիվ կերպով տիրապետի:

Զորրորդ կուրսում ուսումնասիրվում է անալիզի համար առանձնահատուկ նշանակություն ունեցող 2 հարցեր՝ դիֆերենցիալ հավասարումների տեսությունը և անալիտիկ ֆունկցիաների տեսությունը: Անալիտիկ ֆունկցիաների տեսության մի շարք կետեր սերտորեն կապված են տարբական մաթեմատիկայի հետ: Այդ հանգամանքը դասառուուն պետք է դնի անալիտիկ ֆունկցիաների տեսության դասընթացի հիմքում:

Մաթեմատիկական անալիզի դասընթացի շարադրման ժամանակ դասառուուն պետք է պատշաճ ուշադրություն դարձնի տարբական մաթեմատիկայի համար ելական նշանակություն ունեցող հարցերի վրա և հաղորդի պատմական ալելի մեծ արժեք ունեցող նյութեր:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՐԱՀԱԾԻՎ

Ն եր ա ծ ու թ յ ու ն: Հանրահաշվի առարկան: Պատմական նշանակությունը:

I ԲԱԶՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱՀԱԾԻՎԸ

1. ԿՈՄՊԼԵՔՍ ԹՎԵՐ. Թվի գաղափարի դարգացումը: Կոմպլեքս թվեր և գործողություններ դրանց նկատմամբ (կրկնել ձևը): Թվային տիրույթներ (ոդակ և դաշտ):

2. ԱՄԲՈՂՁ ԹԱՅԻՈՆԱԼ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

ա) Գործողություններն ամբողջ ռացիոնալ ֆունկցիաների հետ: Ամենամեծ ընդհանուր բաժանարար: Հաջորդաբար բաժանման պրոցեսը: Բաժանումը $(x-a)$ յերկանդամի վրա: Ռացիոնալ արմատների վորոնումը: Վերածումն ըստ $(x-a)$ յերկանդամի աստիճաններով (Թեյլորի բանաձևը):

բ) Ամբողջ ռացիոնալ ֆունկցիաների անընդհատությունը: Արմատի գոյություն թեորեմը: Գծային արտադրիչների վերածումը: Բազմապատիկ արմատներ: Արմատների և գործակիցների մեջ յեղած առնչությունը: Հասկացություն սիմետրիկ ֆունկցիաների մասին: Վորոջ թվային տիրույթում արտադրիչների վերածնք:

3. ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՐԱՀԱՇՎԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ: Հավասարումների լուծման պրոբլեմը: Յերկանդամ հավասարումներ: Յերրորդ և չորրորդ աստիճանի հավասարումների լուծումը:

4. ԱՄԲՈՂՁ ԹԱՅԻՈՆԱԼ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄՆ ԻՐԱԿԱՆ ԹՎԵՐԻ ՏԻՐՈՒԹՅՈՒՄ: Ամբողջ ռացիոնալ ֆունկցիաների փոփոխման հետադոտումը: Իրական արմատների կոպարները: Արմատների անջատման պրոբլեմը: Շտուրմի թեորեմը:

II ԳԾԱՅԻՆ ՀԱՆՐԱՀԱԾԻՎ

5 ԳԾԱՅԻՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ ՅԵՎ ԳԾԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ: ԴԵՏԵՐՄԻՆԱՆՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ: Յերկու և յերեք անհայտներով գծային հավասարումների սիստեմ: 2-րդ և 3-րդ կարգի դետերմինանտների կառուցվածքը:

11-280039

Տեղափոխությունների, ինվերսիայի և տրանսպոզիցիայի դասակարգումը: Դետերմինանտների ընդհանուր սահմանումը 6. ԴԵՏԵՐՄԻՆԱՆՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.—

Մինորներ և ադյունկտներ: Դետերմինանտի վերածումն ըստ վորեկե շարքի ելեմենտների: Դետերմինանտները հաշվելու յեղանակները:

7. ԳԾԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ՍԻՍՏԵՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ.— Շատ անհայտներով գծային հավասարումների սխեմա: Համասեռ հավասարումներ:

8. ԳԾԱՅԻՆ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Մատրիցների բազմապատկումը: Դետերմինանտների բազմապատկումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնական. Шапиро,— Высшая алгебра, 1935 г.

Լրացուցիչ. 1. Сушкевич,— Основы высшей алгебры.

2. Шрейер и Шпернер,— Введение в линейную алгебру.

3. Бохер,— Введение в высшую алгебру.

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

Ծրագրի առաջին բաժինը նվիրած է թվային և թվերի գաղափարի ուսումնասիրմանը: Կոմպլեքս թվի մասին ուսանողները հիմնական տեղեկություններ ունեն տարրական մաթեմատիկայից, այստեղ անհրաժեշտ է այդ տեղեկություններն ամրապնդել և ընդարձակել: Առանձնապես հարկավոր է ուշադրություն դարձնել կոմպլեքս թվերի յերկրաչափական մեկնաբանման վրա՝ փորպես հարթության վրա վեկտորների և նույնը՝ գումարի մոդալի և տարբերության մոդալի վերաբերվող անհավասարումներին: Յերկրորդ բաժնում դրվում է ամբողջ ռացիոնալ ֆունկցիաների հիմնական հատկությունները: Չորրորդ բաժնում գրավում է ամբողջ ռացիոնալ ֆունկցիաների բաժանների անջատման պրոբլեմը: Ծրագրի 2-րդ մասում («Գծային հանրահաշիվ») ուշադրություն պետք է դարձնել գծային հավասարումների սխեմաների հետազոտման վրա: վերջին բաժնում անհրաժեշտ է տալ գծային ձևափոխությունների խմբի հասկացությունը:

ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԾԱԳՐԱԿԱՆ ՅԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՐԻ ՀԵՏ

I ՆԵՐԱԾԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ

Գծագրության և գծագրական յերկրաչափության տուրքական: Դրանց փոխադարձ կապը: Անցնելիք դասընթացի մեթոդական: Կապն այլ դիսցիպլինաների հետ: Գծագրելու գործիքներ և պիտույքներ:

II ԿԱՌՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Կառուցման ճշտությունը: Լուծման պարզությունը: Խնդիրների կառուցում և անփոփոխում: Գծագրության գծերի տեսակները: Ծալադիրք (ֆորմատ): Չափերի կանգնեցումը: Կարկինայի կորերի կառուցումը: Կորերի կառուցում կետերով:

III ՈՐԹՈԳՈՆԱԼ (ՈՒՂԱԶԻԳ) ՊՐՈԵԿՑԻԱՆԵՐ

Տարածական ձևերը գծագրի հարթության վրա արտապատկերելու մեթոդները: Պատկերը կոնական հեռանկարում:

Չուգահեռ հեռանկար (աքսոնոմետրիա): Որթոգոնալ պրոեկցիաների ստացումը: Կետի և գծի պրոեկցիաները: Թվային նշանակումներով պրոեկցիաներ: Տարածության մեջ ուղիղի դասավորման մասնավոր դեպքերը: Յերկու ուղիղների հարաբերական դրությունը (հատում, զուգահեռություն, խաչում): Ուղիղի հետքերը պրոեկցիոյ հարթության վրա: Հարթ ձևերի պրոեկտումը:

IV ԳԾԱԳՐԱԿԱՆ ՅԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ՁԵՎԻ ՃՇԳՐԻՏ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Պատման մեթոդ: Պրոեկցիայի հարթությունների տեղափոխման մեթոդ: Համատեղման մեթոդ: ուղիղ հատվածի բնական մեծության գտնելը: Ձևերի բնական մեծության գտնելը:

V ՅԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊՐՈԵԿՏԻԱՆԵՐԸ

Յերկու և յերեք հարթությունների վրա մարմինների պրոեկցիայի վորոշումը: Մարմնի թվային նշանակումներով պրոեկցիան մի հարթության վրա: Յերկրաչափական մարմինների փոխումը:

VI ԱՔՍԻՈՆՈՄԵՏՐԻԿ ՊՐՈԵԿՏԻԱՆԵՐ

Ուղանկյուն կոորդինատական առանցքների սխեմի պրոեկցիան հարթության վրա: Յերկրաչափական մարմինների որթոգոնալ աքսիոնոմետրիկ պրոեկցիաների կառուցումը: Իզոմետրիկ և դիմետրիկ պրոեկցիաներ (համաչափ և յերկչափ պրոեկցիաներ): Շեղանկյուն դիմետրիան վորպես հարթանիստ մարմինների ակնառու արտապատկերման պարզագույն ձև:

VII ԿԱՆՈՆԱՎՈՐ ԲԱԶՄԱՆԻՍՏԵՐԻ ՊՐՈԵԿՏԻԱՆԵՐԸ

Քառանիստի (տետրանգրա), ութանիստի (ոկտոնգրա), տասերկու նիստանու (դոդեկանգրա), քսանանիստանու (իքսոնոգրա) պրոեկցիաները:

VIII ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ, ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՒՂԻՂՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հարթությունների տրաման տարբեր յեղանակները: հարթության հետքերը և նրանց դասերը: Ուղիղը հարթության մեջ: Հորիզոնալ և ֆրոնտալ:

IX ՀԱՐԹԱՆԻՍՏ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՅԵՎ ՊՏՏՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՈՎ ՀԱՏԵԼԸ

Հարթանիստ մարմինների հատումը վորոշ դիրքով: Համառեղ հատման յեղանակով: Բնական դիրքի վորոշումը: Հատած մարմինների աքսոնոմետրի կառուցումը: փոման կառուցումը:

X ՀԱՐԹԱՆԻՍՏ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՅԵՎ ՊՏՏՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ ՀԱՏՈՒՄԸ

Հատման դժերի դասերը: Հատած մարմինների աքսոնոմետրի կառուցումը, փոման կառուցումը:

XI ՊՏՈՒՏԱԿԱԳԾԵՐ

Պտուտակագծի կառուցումը: Տիպիկ պտուտակային մակերևութներ և դրանց կառուցումը:

XII ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՍՏՎԵՐՆԵՐԻ ՅԵՎ ԳԾԱՅԻՆ ՇԵՌԱՆԸ-ԿԱՐԻ ՄԱՍԻՆ

Ընկնող և սեփական ստվերներ: Մարմնի արտապատկերման մեթոդները հեռանկարում: Առաջադրությունների կատարումը և հաշվառք:

Դիսոնանսային շրջան: OCT-ի վորոշած կանոնի համաձայն ստվերողը դասընթացի անցման ընթացքում կատարում և 4 գծագրական աշխատանք:

1-ին աշխատանք. ֆորմատ № 3—տրվում և յերկրորդ թեմայից, վորտեղ սովորողը կատարում և տուշով 6 կառուցման խնդիրներ:

2-րդ աշխատանք. ֆորմատ № 3—տրվում և 6-րդ թեմայից հետո, վորտեղ սովորողը կատարում և որթոգոնալ պրոեկցիայի և աքսոնոմետրիայի վերաբերյալ մեկ խնդիր:

3-րդ աշխատանք. ֆորմատ № 3—տրվում և 9-րդ թեմայից հետո, բաղկացած և յերկու խնդիր:

4-րդ աշխատանք. ֆորմատ № 3—տրվում և 11-րդ թեմայից հետո, բաղկացած և 2—3 խնդիրներից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնական.

Калецкий С. Ю.— Черчение с элементами начертательной геометрии, 1935 г.

Լրացուցիչ.

1. Польшау,—Начала начертательной геометрии.

2. Куликов С. П.— Правила и нормы составления и выполнения рабочих чертежей, Машметиздат, 1934 г.

3. Гордон,— Основы технического черчения, 1935 г.

4. Иванов. П.И.— Тони в ортогональных и аксонометрических проекциях.

Դասընթացի նպատակադրումը: 1) Ուսանողների տարածական պատկերացման զարգացումը: 2) Տարածական ձևերի հարթություն վրա արտապատկերման յեղանակների ուսումնասիրումը: 3) Ուսուցել մարմնի պրոեկցիաներով արտապատկերման ճիշտ հասկանալը և զանեղ տված արտապատկերումներով յերկրաչափական հատկությունները, հատկապես սովորեցնել «գծագրի կարգալը»: 4) Սովորեցնել զրատախտակի վրա գրաֆիկ աշխատանքներ: 5) Ուսումնասիրել կառուցման խնդիրների գրաֆիկ մեթոդները:

Վերը նշած նպատակին հասնելու համար սկզբում տրվում է հարթաչափություն կառուցման խնդիրները: Համալուծների կառուցումը, կորերի կառուցումը, վերոնց գծագրերը կատարելու ժամանակ ձևեր և բերվում գործիքներով աշխատելու ունակությունները:

Առաջի աշխատանքի ժամանակ տեղի յե ունենում սովորողներին ծանոթացումը OCT-ի գծագրերի հետ:

Գծագրական յերկրաչափություն դասընթացում սովորողին տրվում է արտապատկերման մեթոդների վերլուծումը, նայած նրանց այս կամ այն դեպքերի նպատակահարմարությունը: Առաջին հերթին տրվում է որթողնալ պրոեկցիայի մասին, մասնավորապես՝ թվային նշանակումներով պրոեկցիաները:

Ակտնոմետրիկ պրոեկցիաները սկսվում են յերկրաչափական մարմինների արտապատկերման ուսումնասիրումով, ընդվորում՝ հատուկ ուշադրություն է դարձվում որթողնալ իզոմետրիկ և շեղանկյուն ղիմետրիկ արտապատկերումների վրա (կաբինետային պրոեկցիաներ):

Յուրաքանչյուր բաժին անցնելիս, տրվում է դադարար այն մասին թե ինչ կապ ունի տվյալ բաժինը տեխնիկայի հետ: Որինակ, որթողնալ պրոեկցիաների կիրառումը շինարարություն և մեքենաշինարարության տեխնիկայի մեջ, թվային նշանակումներով պրոեկցիաները տոպոգրաֆիայի և ջրային գործի մեջ և այլն: Դասընթացն անցնելիս ուշադրությունը պետք է բեղեռել տարածական պատկերացման և զրատախտակի վրա աշխատելու վրա: Վերջինը պետք է հասցնել այն աստիճանին, վոր սովորողը դասառվի անմիջական ղեկավարություն ներքո զրատախտակի վրա խնդիրները կատարելն ընդունելուն:

ՀԱՇՎՈՒՄՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ

1 ՏԱՐԲԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՇՎՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻՑ (Անցվում է առաջին կուրսում):

Ա) ՀԱՂՎԵՔԱՆՈՆ

Լոգարիթմական հաշվեքանոնը, վորպես ժամանակակից հաշվումների ոժանդակող կարևորագույն միջոց: Հաշվեքանոնի ֆունկցիոնալ ցուցանակները (շխարհներ): Բաղմապատկում: Բաժանում, քառակուսի և խորանարդ բարձրացները, քառակուսի և խորանարդ արմատ հանելը, տվածի ուղիղ և հակադարձ համեմատական արժեքների հաշվումը:

Բ) ՍԻՆՈՍՆԵՐԻ ՀԱՂՎՈՒՄԸ

Մոտավոր թվերի ճշտություն գնահատման տարբեր յեղանակները, ամենացածր և ամենաբարձր կոպարները, ճշտությունների բացարձակ և հարաբերական կոպարները, ճշտորոշ նշանակություն ունեցող թվանշանների թիվը և ճշտորոշ տասնորդական նշանների թիվը: Չափումներից ստացված արդյունքների սխալների հաշվումը (միջին թվաբանական, միջին թեքումը թվաբանական միջինից): Հաշվումներից ստացված արդյունքների սխալների հաշվումն ըստ կոպարների յեղանակի (կրկնակի հաշվումների յեղանակ) և ըստ սխալների կոպարների յեղանակի: Թվանշանների հաշվման կանոնը և դրանց կիրառությունը հաշվառքում (առանց սխալների խիստ հաշվառման):

11 ԹՎԱՅԻՆ ՀԱՇՎՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Թվային հաշվումների նշանակությունները մաթեմատիկայի բոլոր կիրառությունների համար: Այսպիսի հաշվումների ուսցիոնալիզացման կարևորությունը: Հաշվելու ուսցիոնալիզացման աշխատանքի խնդրի յերկու կողմերը՝ հաշվելու մեքենայացումը և սխալների հաշվառումը:

Բանաձև և լողարիթմ: Սքեմա: Ստուգում, Մաթեմատիկա-
կան աղյուսակներ և դրանցից ոգտվելը: Ճշգրիտ հաշվումների
համար պիտույքներ: Դործածվող մոտավոր բանաձևեր: Սրգ-
յունքի սխալների կողարի վորոշման ընդհանուր յեղանակները,
յերբ տված և սխալների կողարների լրիվ դիֆերենցիալը:

III ՆՈՄՈԳՐԱՖԻ ՏԱՐԵՐԸ

Հաշվումային խնդիրների գրաֆիկ լուծման յեղանակները:
Ֆունկցիոնալ ցուցանակներ (շկալաներ): Կրկնակի ցուցանակով
նոմոգրամներ: Ցանցավոր նոմոգրամներ: Հավասարեցված կետե-
րից նոմոգրամներ. (զուգահեռ ցուցանակներ, հատվող ցուցա-
նակներով նոմոգրամներ, կորագիծ ցուցանակներով նոմոգրամմ-
ներ): Նոմոգրամների մի քանի ալլ տեսակները:

IV ԻՆՏԵՐՊՈԼԱՅԻԱ

Ինտերպոլացիայի խնդիրը: Պարարոլիկ ինտերպոլացիա:
Տարբեր կարգիների տարբերությունը և դրանց կարևորա-
գույն հատկությունները: Նյուտոնի, Ստիրլինգի և Բեսսելի ին-
տերպոլացիոն բանաձևերը և դրանց կիրառությունները: Ին-
տերպոլացիոն բանաձևերի ճշտությունը: Եմպերիկ ֆունկցիա-
ներ: Հասկացություն նվազագույն քառակուսիների մեթոդի
մասին և դրա կիրառություններն եմպերիկ բանաձևերի գործա-
կիցների հաշվելու մեջ: Եմպերիկ բանաձևերի կառուցումն
ընտրած կետերի յեղանակով և միջինների յեղանակով:

V ԹՎԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Մի անհայտ հավասարումների արմատների անջատումը և
առաջին մոտավորության ստացման գրաֆիկ յեղանակը: Դրա
ճշգրտումը կեղծ գրության յեղանակով և Նյուտոնի յեղանակով:
Նյուտոնի յեղանակով գտած արդյունքի սխալը: Իտերացիայի
յեղանակ: Իտերացիայի պրոցեսի զուգամիտումը: Հավասա-
րումների սխալների լուծման Նյուտոնի յեղանակը:

VI ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐՈՎ ԿԱՍ ԳՐԱՖԻԿՈՎ ՏՎԱԾ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ԴԻՖԵՐԵՆՑՈՒՄԸ ՅԵՎ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ

Գրաֆիկ դիֆերենցում: Գրաֆիկ ինտեգրում: Հասկացու-
թյուն պրանիմետրի (հարթաչափ) և ինտեգրալի մասին: Թվա-
յին ինտեգրումներ սեղանների, Սիմպսոնի միջին ուղանկյուն-
ների բանաձևերով: Թվային դիֆերենցումը և ինտեգրումն ին-
տերպոլացիայի բանաձևերից ստացված բանաձևերով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնական:

Брадис,—теория и практика вычислений (изд. 1935 г.)

Լրացուցիչ:

1. Безикович,— Приближенные вычисления, 1933 г.

2. Брадис,—Как надо вычислять, вып. 1, 2, 3, (учгиз, 1932—24 гг.)

3. Крылов,—Лекции о приближенных вычислениях, изд. Академии наук 1933 г.)

4. Идельсон,—Способ наименьших квадратов (изд. КУБУЧ, 1932 г.)

5. Швердт,—Введение в практическую номографию (ГТТИ 1932 г.)

6. Глаголев,—Теоретические основы номографии (ГТИИ 1934 г.)

7. Франк,—Номографический справочник (ГТТИ 1933 г.)

ԲԱՑԱՐԱԳԻՐ

«Հաշվումների տեսությունն ու պրակտիկան» դասընթացն ըստ իր
քննյթի վեր և ամվում յերկու մասի՝ տարրական (խկական ծրագրի 1 և
2-րդ բաժինները) և հատուկ (3-րդ և 4-րդ բաժինները):

Տարրական մասի մշակման նպատակն և ուսանողին աալ հաշվելու
տեխնիկայի հիմնական տեղեկությունները, վորպեսզի ուսանողները հան-
դիպելով թվային հաշիվներին, վորն անխուսափելի յե մաթեմատիկական և
եքսպերիմենտալ (ֆիզիկա, քիմիա) դիսցիպլինաներում, կարողանան ճշգրիտ,
արագ և նվազագույն ժամանակի և ուժի ծախսմամբ կատարել:

Ապագա մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչներին, հաշվելու աշխատանքի ռացիոնալիզացման հիմնական յեղանակները հետ այս որևիպակ ծանոթացումն, ունի հսկայական նշանակություն, վորովհետև դա նպաստում է հետազոտում միջնակարգ դպրոցներում հաշվելու անդրադիտություն վերացմանը: Տարրական մասում մտնում է հաշվելու կարեորագույն ոժանդակող միջոցների անհրաժեշտումը և արդյունքների ու չափումների սխալների հաշվառման յեղանակների յուրացումը: Տարրական մասի մշակումը սկսվում է 1-ին կուրսից, վորպեսզի մանկավարժական բաժնի մանկուլ առաջին իսկ տարուց ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետի ուսանողը կարողանա ռացիոնալ հաշվել:

Անհրաժեշտ է դիտողություն անել (3-րդ նոմոգրաֆի տաբլերը) թեմայի մշակման բնույթի մասին: Այս թեմայի նպատակն է տալ հասկացություն նոմոգրաֆիների մասին և սովորեցնել ուսանողներին դիտակցաբար ռգտվել տարբեր տեսակի պարզագույն նոմոգրաֆիներից: Ուսանողը նոմոգրաֆի ռգնություն մը պետք է կարողանա կատարել նախատեսած կատարվելիք հաշվումը և բացատրել, թե ինչու նոմոգրաֆը տալիս է ճիշտ արդյունք:

Մրադրել նյութի շտապ մշակումը պահանջում է ուսանողից ինքնուրույն աշխատանք (առավելապես հաշվային): Մայրահեղ դեպքում ցանկալի յե, վոր ուսանողների այդ ինքնուրույն աշխատանքը բնթանա հատուկ սենյակում, ուր իրենց տրամադրությունն առկ լինեն հաշվելուն ռգնող բոլոր միջոցները (արիթմամետր, հաշվային քանոններ, աղյուսակներ և այլն):

ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ

Հավանականությունների տեսությունն առարկան, վորպես գիտություն պատահական մասսայական յերեույթների մասին: Հավանականությունյան կլասիկ սահմանումը մաթեմատիկայում: Հավանականությունյան միավորը: Անհամատեղ դեպքերի հավանականությունների գումարումը: Դեպքերի պայմանական հավանականությունները և հավանականությունների բազմապատկումը: Անկախ դեպքերի դեպքը: Հասկացություն հավանականությունների տեսության աքսիոմատիկ կառուցման մասին:

Հավասարահարավոր դեպքերի համրելու ձևը: համակցման կիրառումը հավանականություններն հաշվելու համար: Հավանականությունների գումարման և բազմապատկման ռրենքների կիրառությունները: Լրիվ հավանականությունյան բանաձևը և Բեյեսի թեորեմը, դրանց կիրառումները:

2 ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՐՋԱԳՈՒՅՆ ՍԲԵՄԱՆ

Փորձերի կրկնումը հաստատուն պայմաններում: Բաշխման բինոմիալ ռրենքի հատկությունները:

3. ՄԵԾ ԹՎԵՐԻ ՈՐԵՆԲԸ

Պատահական մեծություն և դրա բաշխման ռրենքը: Մաթեմատիկական սպասումը և դրա իմաստը: Գումարման և բազմապատկման թեորեմները մաթեմատիկական սպասման համար: Թեքումների հասկացությունը: Դիսպերսիայի հասկացությունը: Գումարման թեորեմն անկախ մեծությունների դիսպերսիայի համար: Չերիշեվի անհավասարությունը: Չերիշեվ թեորեմը: Մասնավոր դեպքեր՝ Բերնուլի թեորեմը, մի մեծության միջին թվաբանականի արժեքը: Մեծ թվերի ռրենքի իմաստը և դրա նշանակությունը վիճակագրության համար:

4. ԲԱՇԽՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՈՐԵՆԲՆԵՐԸ

Բաշխման ռրենքն անընդհատ պատահական մեծության դեպքում: Հավանականությունյան խտությունը, մաթեմատիկական սպասում և դիսպերսիա: Հասկացություն հավասարաչափ բաշխման ռրենքի մասին: Հասկացություն Գաուսի դիտման սխալների բաշխման ռրենքի մասին և դրա հատկությունները: Լապլասի թեորեմը հաստատուն պայմաններում փորձերի կրկնման համար և դրա կիրառումը ստատիստիկայում ջոկելու մեթոդի նկատմամբ: Պուասոնի՝ սահմանային բանաձևը և դրա կիրառումները:

5. ՀԱՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ՍՏԱՏՈՍՏԻԿԱՅՈՒՄ ԲԱՇԽՄԱՆ ՈՐԵՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բաշխման եմպիրիկ կորը և զրա գիստոգրամմը: Ստատիս-
տիկ քարակտերիստիկաներ: միջին, զիսպերսիա, հասկացու-
թյուն միջինի գնահատման մասին և միջինների բաղդատումը:
Հասկացություն հարաբերակցության (корреляция) և գործակ-
ցային հարաբերակցության մասին:

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

Ծրագրին ընդգրկում և հավանականությունների տեսության գիտե-
լիքների այն ծավալը, վորով ներկայումս լրիվ կերպով գործնականում անց-
նում են բարձրագույն ուսումնական հիմնարկներում, մանկավարժական ինս-
տիտուտներում, համալսարաններում:

Հավանականությունների տեսության ծրագրը (վերջին բաժնի տես-
քով) ընդգրկում և մաթեմատիկական ստատիստիկայի հիմնական տեղեկու-
թյունները: Այս զխցիպլինային ավելի լայն լուսաբանումը աննպատակ և
հենց այն պատճառով, վոր մաթեմատիկոս ուսանողը կարիք և զգում ծանո-
թանալ միայն զրա հիմունքների հետ:

ՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԱՆԻԿ

I ՄԱՍ. ՍՏԱՏԻԿԱ

1. Ներածություն: Ստատիկայի աքսիոմները:

2. Մի կետում կիրառված ուժեր:

Ուժերի գումարումը և վերլուծումը: Պրոեկցիաների մե-
թոդը: Ազատ մարմնի հավասարակշռության պայմանները,
զուգամերձ ուժերի աղդման ժամանակ: Հասկացություն կապ-
ված մարմնի մասին, կապերը և զրանց ուղեկցիաները, կապված
մարմնի հավասարակշռման պայմանները:

3. Զուգահեռ ուժեր:

Յերկու զուգահեռ և հակազուգահեռ ուժերի գումարումը,
ուժագույգ: Շատ զուգահեռ ուժերի գումարումը: Զուգահեռ ու-
ժերի կենտրոնը:

4. Ծանրության կենտրոն:

Ծանրության կենտրոնի կոորդինատների ընդհանուր բա-

նաձևերը: Սիմետրիկ մարմինների ծանրության կենտրոնի
դրությունը: Պարզագույն ձևի մարմինների և պատկերների ծան-
րության կենտրոնները: Մարմինների և պատկերների ծան-
րության կենտրոնի վորոշումը զրանց մասերի բաժանման մե-
թոդով:

5. Մոմենտների տեսությունը:

Ուժի մոմենտը՝ կետի նկատմամբ: Վարինոնի թեորեմը,
լծակների հավասարակշռությունը: Ուժերի մոմենտ առանցքի
նկատմամբ, կոորդինատների առանցքների նկատմամբ ուժերի
մոմենտների բանաձևերը:

6. Զույգերի տեսությունը:

Ուժագույգերը վորպես վեկտոր: Զույգերի համարժեքու-
թյունը: Զույգերի գումարումը:

7. Ծանրության մեկ ցանկացած ձևով դասավորված ու-
ժերի սխեմներ:

Ուժերի սխեմմի բերումը տված կենտրոնի: Գլխավոր
վեկտոր և գլխավոր մոմենտ: Տարածական ուժերի սխեմմի հա-
վասարակշռության պայմանները, կապված մարմնի հավասա-
րակշռությանը: Մասնավոր դեպքեր:

ա) ուժերի հարթ սխեմմի հավասարակշռությունը, բ) զու-
գահեռ ուժերի սխեմմի հավասարակշռությունը:

8. Շփում:

Սահման շփումը: Կուլոն-Մորենի որենքը, գործակից և շրփ-
ման անկյուն:

II ՄԱՍ. ԿԻՆԵՄԱՏԻԿԱ

1. ԿԵՏԻ ԿԻՆԵՄԱՏԻԿԱՆ

Կետի շարժման հետադիծը, շարժման հավասարումը տված
հետադիծով, շարժման զրաֆիկը: Արագություն, արագության
կորը: Արագացում: Արագացման պրոեկցիաները շոշափողի և
նորմալի վրա: Կետի շարժման հավասարումները դեկարտյան
կոորդինատներով: Դեկարտյան կոորդինատներով տված, տվյալ
հավասարումներից հետադիծի, արագության և արագացման վո-

րոշումը: Կետի շարժման հավասարումները բեկեռային կոորդինատներով: Արագության արտահայտությունը բեկեռային կոորդինատներով: Արագությունների գումարման թեորեմը:

2. ՊԻՆԴ ՄԱՐՄՆԻ ԿԻՆԵՄԱՏԻԿԱՆ

Մարմնի համընթաց շարժումը: Մարմնի պտտումն առանցքի շուրջ, անկյունային արագություն և անկյունային արագացում, պտտման մարմնի կետերի գծային արագությունը և գծային արագացումը: Մարմնի պտտականային շարժումը: Մարմնի հարթ-գուդահեռ շարժումը, հարթ-գուդահեռ շարժման հավասարումները: Պտտման ակնթարթային կենտրոնը, թեորեմ մարմնի յերկու կետերի արագության պրոեկցիաներն այդ յերկու կետերը միացնող ուղղի վրա:

III ՄԱՍ. ԴԻՆԱՄԻԿԱ

Ա. ԿԵՏԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

1. Գալիլեյ—Նյուտոնի—դինամիկայի հիմնական որոնքները: Ազատ նյութական կետի շարժման դիֆերենցիալ հավասարումները:

2. Կետի դինամիկայի ընդհանուր թեորեմները: Շարժման քանակ և ուժի իմպուլս: Շարժման քանակի թեորեմը: Շարժման քանակի մոմենտի թեորեմը: Կենտրոնական ուժի թեորեմը, մակերեսների թեորեմը:

Կինեմատիկական ենթադրյալ և ուժի աշխատանքը: Կենդանի ուժի թեորեմը: Պոտենցիալի տեսությունը, ենթադրյալի պահպանման որոնքը—պոտենցիալ ուժադաշտում կետի շարժման դեպքում:

3. Մոլորակների շարժումը: Նյուտոնի որոնքի ստացումը Կեպլերի որոնքներից և հակառակը:

4. Տատանումների տեսությունը: Կետի հարմոնիկ տատանումը, մարդ տատանում: Հարկադրված տատանում, (ստիպողական ճոճում): Ռեզոնանս:

5. Կապված կետ: Մակերևույթի վրա շարժվող կետի դի-

ֆերենցիալ հավասարումը: Կապված կետի կենդանի ուժի թեորեմը: Դալամբերի սկզբունքը: Մաթեմատիկական ճոճանակ:

6. Կետի հարաբերական շարժումը: Շարժումների հարաբերական տեղափոխումը և գումարումը, բարդ շարժման արագացման թեորեմը (Կորիոլիսի թեորեմը): Կետի հարաբերական շարժման դիֆերենցիալ հավասարումը: Փուլոյի ճոճանակը:

Բ) ՍԻՍՏԵՄԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

1. Խնդրի յայի մոմենտը: Մարմնի կետի իներցիայի մոմենտը տված առանցքի և տված կետի նկատմամբ: Շտայների թեորեմը: Պարզագույն մարմինների և պատկերների իներցիայի մոմենտների հաշվելու որինակներ:

2. Սիստեմների դինամիկայի ընդհանուր թեորեմներ: Սիստեմների շարժման քանակների վերաբերյալ թեորեմներ: Սիստեմի ծանրության կենտրոնի շարժման թեորեմը: Թեորեմ սիստեմի շարժման քանակի մասին: Կենդանի ուժերի թեորեմը:

3. Պինդ մարմնի պտտումն անշարժ առանցքի շուրջը: Պինդ մարմնի պտտական շարժումների դիֆերենցիալ հավասարումը: Փիզիկական ճոճանակ:

4. Պինդ մարմնի պտտումն անշարժ կետի շուրջ: Անշարժ կետ ունեցող մարմնի ընդհանուր շարժման հավասարումը: Ոյլերի դեպքը: Կանոնավոր առաջանցման դեպքերը: Հասկացություն կանոնավոր առաջանցում (պրեցեսիա) առաջ բերող ուժերի մասին: Դիրսկոպիկ ռեակցիայի որինակներ:

5. Դինամիկայի ընդհանուր սկզբունքները:

